В.М. ХАЧАТРЯН

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ О МНОЖЕСТВЕННОМ ЧИСЛЕ СУЩЕСТВИТЕЛЬНОГО В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Рассматриваются проявления множественного числа существительного в современном восточноармянском языке, которые отклоняются от общей нормы. Для существующих пар предложены приемлемые формы. Отмечено, что некоторые проявления определяют направление нормальных изменений.

Ключевые слова: множественное число существительного, форма множественного числа, окончание, корень, грамматическая версия, литературная норма.

V.M. KHACHATRYAN

SOME ISSUES ON THE PLURAL FORM OF NOUN IN MODERN ARMENIAN

The expressions of plural nouns in modern literary Eastern Armenian which deviate from the general standard are studied. Acceptable forms have been preposed for the existing pairs. It has also been noted that some manifestations determine the direction of normal changes.

Keywords: plural form of nouns, plural form, ending, root, grammar version, literary norm.

ՀՏԴ 81.282:81′367

Լ.ՈՒ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՐՁՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԿԱՐԾՐԱՏԻՊԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԽՆԴԻՐ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

Դիտարկվում են շարահյուսական կառույցի լեզվական շինանյութ ներկայացնող դարձվածքները և խոսքային կարծրատիպերը: Կայուն կամ վերաիմաստավորված լեզվական այս միավորները յուրահատուկ դրսևորում ունեն հատկապես խնդրային ստորադասական նախադասություններում, որտեղ կարող են ունենալ գերադաս կամ կախյալ բաղադրիչի հստակ կարգավիճակ կամ հանդես գալ որպես այդ բաղադրիչների ձևավորման էական մաս:

Առանցքային բառեր. դարձվածք, խոսքային կարծրատիպ, բարդ ստորադասական նախադասություն, խնդրային ստորադասություն, ստորոգում, շարահարական կառույցներ, եղանակավորում:

Գեղարվեստական խոսքում, հատկապես կերպարային լեզվի տիպականացման միտումով, շատ են հանդիպում կառույցներ, որոնց մեջ գերադաս կամ կախյալ բաղադրիչի դերում հանդես է գալիս դարձվածքը, որը «բառերի կայուն,

պատրաստի վերարտադրելի, վերաիմաստավորված կապակցություն է, ուր բաղադրիչ բառերի ինքնուրույնությունը ձևական է, շարահյուսական կապը՝ մթագնած» [1, էջ 5]: Լեզվաբանության մեջ կան տեսակետներ [2, 664], թե դարձվածքային բաղադրիչով ձևավորված նման կապակցությունները չպետք է դիտել որպես բարդ կառույցներ: Սակայն, ըստ մեզ, կախված այն հանգամանքից, թե ստորադասական նախադասության մեջ կախյալի կարգավիճակում հանդես եկող դարձվածքը ինչ պաշտոնով է հանդես գալիս, ձևային առումով քերականական արժեք ներկայացնում է, թե սոսկ երանգավորման դեր է խաղում, այս մոտեցումը կրում է հարաբերական բնույթ: Ասվածն ավելի հստակեցնելու նպատակով դիտարկենք հետևյալ օրինակները.

1) *Խելքդ ի՞նչ է կտրում*, կարո՞ղ է դժոխքը սուտ դուրս գալ [3, 435]:

2) *Էստեղ ինչ կա չկա* ես կուտեմ [4. 27]:

Բերված նախադասություններից 1-ինը շարահարական կառույց է, որում կա մշուշոտ ստորոգում: ***Խելքդ ի՞նչ է կտրում*** դարձվածք գերադասը, որն իմաստով համարժեք է *ի՞նչ ես կարծում, ի՞նչ կարծիքի ես, ի՞նչ ես մտածում* և նման այլ արտահայտություններին, արտասանվում է որոշակի դադարով, տրոհումն արտահայտվում է կետադրմամբ: Այստեղ դարձվածք բաղադրիչն ունի հստակ կարգավիճակ՝ գերադաս նախադասություն, որը պահանջում է ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն լրացում:

Նույնը չի կարելի ասել 2-րդի մասին: Առաջին հայացքից տպավորությունն այն է, թե սա զոդվածական կառույց է՝ *ինչ* նշույթով, որտեղ կախյալ դարձվածքն ամբողջապես ձուլված է թվացյալ գերադասին, և եթե նման մոտեցմամբ փորձենք վերականգնել կառույցը, ապա կստացվի հետևյալը «Ես կուտեմ (այն), ***ինչ*** էստեղ ***կա չկա***»: Չնայած այս դեպքում ստորոգումը քիչ թե շատ վերականգնվում է, բայց խախտվում է ***ինչ կա չկա*** դարձվածքի կառուցվածքային ամբողջականությունը: Ուստի այս կառույցը դիտել որպես ստորադասական, իսկ դարձվածքը՝ դրա կախյալ բաղադրիչ, ճիշտ չի լինի: Դարձվածքն այս օրինակում պարզ նախադասության ուղիղ խնդիր լրացումն է:

Այստեղից հետևություն, որ չնայած խնդրային ստորադասական կառույցներում հանդիպող որոշ դարձվածքների ստորոգումը իմաստային առումով ձևական է, մթագնած, սակայն դրանք (1-ին օրինակ) չեն սահմանափակվում երանգավորման գործառույթով, այլ կարող են ունենալ բարդ կառույցի բաղադրիչի հստակ կարգավիճակ: Դեռ ավելին, դրանց հիմքում ընկած է այլաբանություն, որը կառույցի իմաստային դաշտում անհրաժեշտ է, և առանց դրա կառույցը կունենա թե՛ իմաստային, թե՛ ձևային կորուստներ:

Հիշենք, որ դարձվածքները ծագել են ժողովրդախոսակցական լեզվում՝ բառակապակցությունների վերաիմաստավորման, ոճական-արտահայտչական ձևերի գործադրման, խոսքի համառոտման, կրճատման և նման այլ ճանապարհներով [2, 488], և հայերենի զարգացման արդի փուլում էլ առկա է դրանց շարունակական ձևավորումը: Գեղարվեստական խոսքում (մասնավորապես կերպարային նկարագրություններում) դրանց աճման միտումն են վկայում հատկապես շարահարական կառույցները, որոնցից շատերի համար ոչ միայն դարձվածքներն են դառնում լեզվական շինանյութ, այլև ավելին, շարահարական շատ կառույցներ, իրենց հակիրճության և իմաստային խտացման շնորհիվ, իրենք են դառնում դարձվածաշինության հենք: Այլ կերպ ասած՝ **շարահարական կառույցն ու դարձվածքը երբեմն սերտաճում են իրար**: Ուստի նման դեպքերում **դարձվածքները ևս պետք է համարել շարահյուսական բաղադրիչներ**՝ քննելով դրանք և՛ ձևային, և՛ իմաստային դաշտերում (պաշտոնը, այլաբանական իմաստն արտահայտող բառը կամ արտահայտությունը, ոճավորման գործառույթը ևն):

Թեև դարձվածքները դառնում են ստորադասական նախադասությունների առանձին բաղադրիչներ, սակայն դրանց շարահյուսական պաշտոնը միշտ չէ, որ հստակորեն տարբերակվում է: Դարձվածքներով կառուցված ստորադասական կապակցություններ շատ են հանդիպում հատկապես կերպարային խոսքում: Դրանք կարող են լինել և՛ զոդվածական, և՛ շարահարական, ունենալ կամընտիր տրոհում:

Դիտարկենք դարձվածքի՝ որպես ստորադասական կառույցի բաղադրիչի որոշ դեպքեր.

1. Դարձվածքը կարող է հանդես գալ ստորադասական կառույցի ***գերադաս բաղադրիչի*** դերում կամ լինել ***գերադասի մաս***: Օրինակ՝

ա) [Նրա սիրտը թույլ է,] ***ո՞վ գիտե*** ինչեր կարող են առաջ գալ [5, 5]: ***Ասված գիտի,*** թե ինչու վերցրեց ու մեռավ [6, 586]: [Ի՞նչ պիտի պատահի,] ***խելքներին փչել է*** թե վար ու ցանք չենք ուզում [7, 306]: ***Ձեռաց գլխի ընկա***, որ խուզարկողները կարող են մտնել նաև իմ խոհանոցը ու գտնել Քրիստի տված թուղթը [9, 8]: ***Ո՞վ է իմանում՝*** ինչպիսին կլիներ Թելոն, եթե նա ապրած լիներ Սիրունի պայմաններում [10, 208]:

բ) Դա պատերազմի ճանապարհին ինձ հանդիպած թշնամիներից ամենանողկալին էր, թեպետ ինչ–որ մեկը մերոնցից, լսելով սարյակի պատմությունը, ***հիմար-հիմար դուրս տվեց***, թե ֆաշիստն էլ, պարզվում է, սիրտ ունի /11, 31/:

Բերված օրինակներից երևում է, որ դարձվածքներն ունեն իրենց որոշակի դերը և թե՛ ձևային, թե՛ իմաստային առումով կարող են դառնալ բարդ ստորադա-

սական նախադասության բաղադրիչներ: Օրինակ, եթե մի դեպքում /ա/ դրանք դիտվում են որպես գերադաս բաղադրիչներ, ապա մեկ այլ դեպքում /բ/ հանդես են գալիս որպես գերադաս բաղադրիչի բայական անդամին փոխարինողներ:

2. Դարձվածքը կարող է լինել ամբողջապես ***ստորադաս բաղադրիչ*** /ա/ կամ ***ստորադաս բաղադրիչի մաս*** /բ/: Օրինակ.

ա) Աստված թափ է տվել ձեռքն ու մի կողմ կանգնել. ***գլուխներդ քարը***, [արեք ինչ ուզում եք, տեսնենք թե ուր եք հասնելու] [12, 162]: Չե՞ս լսել, ասում են՝ ***աղքատ ու հպարտ է*** [4, 27]: Գնա հորեղբորդ ասա, որ հորդ տարել են բանակ, որ տունը կաթում է և ***ձեռքներս քարի տակ են*** [4, 63]:

բ) Իսկ Սողոն ժամանակ չունի նայելու, թե ում ***աչքի վերևն ունք կա***, ումը՝ չկա [7, 272]: Վահանը պատմեց նրան, թե ինչպես այսօր, առավոտը վաղ, պարտքատերերը մեկը մյուսի հետևից ***դուռը կտրեցին*** [12, 153]: Բայց Հոբոսը գիտեր, որ պետք է վախենալ ***մարմանդ գետից*** [12, 177]: Ճիշտ է, նրան հասկացրին, որ պետք է [մարդկանց հետ վարվել կարողանալ,] ***բոլորին նույն արշինով չչափել*** [13, 88]: Զգաստ հրահանգիչը պատճառաբանել է, թե Աշոտի հայրը գերի է հանձնվել թշնամուն և հիմի իր ***պատիժն է քաշում*** [14, 781]:

3. Հանդիպում են ***նախադասություն-դարձվածքներ***, որոնք հիմնականում դրսևորվում են որպես թևավոր խոսքեր կամ ասացվածքներ: Օրինակ.

Էն ի՞նչն ա ինչ, ***ջորուն հարցնում են մերդ ո՞վ ա, նա թե ձին քավորս ա*** [12, 96]: ***Աղքատն***, ասում են, ***իրեն խելքից է աղքատ լինում*** [15, 599]:

Ինչպես երևում է վերը բերված օրինակներից, դարձվածքը, դառնալով ստորադասական նախադասության այս կամ այն բաղադրիչ, ինչ–որ չափով մթագնում է կառույցի տվյալ հատվածի քերականական բնութագիրը, որը թույլ չի տալիս հստակեցնել դրա շարահյուսական նեղ պաշտոնը: Այս իմաստով՝ կան ձևային աղերսներ դարձվածքների և խոսքային այն կարծրատիպերի միջև, որոնք լեզվի զարգացման գործընթացում ձեռք բերելով բացարձակ կայունություն՝ կարող են վերածվել դարձվածքային նախատիպերի:

Ասելիքն ավելի հստակեցնելու նպատակով նախ փորձենք տալ **խոսքային կարծրատիպերի** համառոտ բնութագիրը:

Բանավոր առօրյա խոսքում հանդիպում են բառակապակցություններ, արտահայտություններ, որոնք խոսքի հակիրճության և դյուրընկալության պահանջով ունենում են կրկնման մեծ հաճախականություն, որի շնորհիվ ձեռք են բերում կառուցվածքային կայունություն, բանաձևային տեսք կամ, այլ կերպ ասած, կարծրանում են: «Խոսքի կարծրատիպերը … պատրաստի, նույն ձևով և իմաստով վերարտադրվող արտահայտության՝ խոսքի մեջ հաճախակի գործածման

արդյունք են» [16, 93]: Կարծրատիպերով կառուցվում են նաև խնդրային ստորադասական կառույցներ (երբեմն՝ զոդվածական, ավելի հաճախ՝ շարահարական): Դրանք արտասանվում են «մի շնչով»՝ առանց դադարի: Նման կաղապարված արտահայտությունները, որոնց մեջ ստորոգումը գրեթե վերացած է, թափանցում են նաև գեղարվեստական խոսք և պահանջում տրոհման առանձնահատուկ մոտեցում, այս դեպքում, ավելի ճիշտ կլինի ասել, կետադրության բացառում: Օրինակ՝

Ասո, ***կարաս ասես*** էս ով ա [3, 136]: Իսկ դու ***գիտե՞ս ինչ ասել է*** հարավ [5, 40]: Ես ***չգիտեմ ինչ արեցի*** [3, 45]**:** ***Ես ինքս էլ չգիտեմ*** ո՞նց փրկեցի կաշիս [5, 41]: ***Ինչ կուզես արա***՝ չկա [17, 217]: Համ էլ ***գիտե՞ս ինչ կա,*** Կամո ջան, էդ սատանի սանդուղքով բարձրանալիս կարող է ***վեր ընկնենք մեռնենք***, թող գոնե կուշտ փորով մեռնենք [8, 219]:

Այս օրինակներում առկա են կարծրատիպեր, որոնք միտված են դառնալու դարձվածքային արտահայտություններ: Նախադասություններում դրանք ունեն իրենց պաշտոնները.

ա) ***կարաս ասես, ես ինքս էլ չգիտեմ*** – շարահարական կառույցի գերադաս բաղադրիչներ.

բ) ***վեր ընկնենք մեռնենք*** – ստորադաս բաղադրիչի մաս.

գ) ***գիտե՞ս ինչ ասել է, չգիտեմ ինչ արեցի, գիտե՞ս ինչ կա, ինչ կուզես արա*** - առանձին շարահարական կառույցներ:

Դիտարկենք օրինակների ևս մեկ խումբ.

2) ***Գիտեմ*** ինչի համար են կանչել Արտաշեսին [18, 421]: ***Տեսա՞ք*** ոնց կերավ սոված շունը [4, 30]: Ես կոպտեցի նրան, ***չեմ հիշում*** ի՞նչ ասացի, բայց նա լցվեց ու գնաց [5, 16]: **Մի տեսնեմ** որտե՞ղդ է վնասվել [8, 212]:

Գիտեմ, տեսա՞ք, չեմ հիշում, [մի] տեսնեմ խնդրառու բայերը շարահարական կառույցների գերադաս բաղադրիչներ են, սակայն դրանցում ստորոգման իմաստը մթագնել է, դրանք կարծես իմաստով ձուլվել են իրենց խնդիր կախյալներին և արտաբերվում են գրեթե առանց տրոհման:

Օրինակների երկու խմբում էլ տեսանելի է, որ խոսքային կարծրատիպերում ևս առկա է ստորոգման իմաստի մթագնում, մի հատկանիշ, որը բնորոշ է նաև դարձվածքներին և որը կանխատեսում է անցումը՝ կարծրատիպերից դեպի դարձվածքներ:

Վերոշարադրյալից կարելի է գալ հետևյալ **եզրահանգման**: Խնդիր ստորադասական կառույցներում և՛ դարձվածքները, և՛ կարծրատիպերն ունեն ձևական կամ մթագնած ստորոգում: Դա երևան է գալիս հատկապես շարահարական

կառույցներում, որտեղ տեսանելի է կարծրատիպ-դարձվածք անցման լեզվական միտումը: Դարձվածքի և կարծրատիպի գործառույթները չեն սահմանափակվում միայն երանգավորման դերով, քանի որ բարդ ստորադասական կառույցում դրանք ևս կարող են ունենալ գերադաս կամ կախյալ բաղադրիչի հստակ կարգավիճակ կամ հանդես գալ որպես այդ բաղադրիչների ձևավորման էական մաս կամ, այլ կերպ ասած, երկուսն էլ, սերտաճելով նախադասությանը, դառնալ դրա շարահյուսական բաղադրիչներ: Ուստի նշված լեզվամիավորները ենթակա են քննության և՛ ձևային, և՛ իմաստային դաշտերում՝ իրենց ունեցած շարահյուսական պաշտոնի, այլաբանական իմաստի և ոճավորման գործառույթների համադրական վերլուծմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Բեդիրյան Պ.,** Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., Լույս, 1973, 232 էջ:
2. **Հայոց լեզու,** I մ., Ա պր., Ներածություն, հնչյունաբանություն, բառագիտություն, դարձվածաբանություն / Գ.Բ. Ջահուկյան և ուրիշ., Ե., Լույս, 1980, 528 էջ:
3. **Արամյան Վ.**, Մարդու սերը, Ե., Հայպետհրատ, 1962, 180 էջ:
4. **Խանզադյան Ս.**, Ավանդատուն, Ե., Սովետական գրող, 1986, 288 էջ:
5. **Ավագյան Ա.,** Վաղը, Ե., Հայպետհրատ, 1951, 236 էջ:
6. **Մահարի Գ.**, Երիտասարդության սեմին, Ե., Հայպետհրատ, 1956, 667 էջ:
7. **Աղավնի**, Շիրակ, Ե., Հայպետհրատ, 1957, 516 էջ:
8. **Անանյան Վ.**, Սևանի ափին, Ե., Հայպետհրատ, 1953, 526 էջ:
9. **Խանզադյան Ս.,** Կարմիր շուշաններ, Ե., Հայպետհրատ, 1958, 330 էջ:
10. **Թաթիկյան Շ.,** Նրա ճանապարհը: Գիրք 2-րդ, Ե., Հայպետհրատ, 1958, 475 էջ:
11. **Պետրոսյան Վ.**, Վերջին գիշերը, Ե., Հայպետհրատ, 1959, 228 էջ:
12. **Սահինյան Ա.,** Ընտիր երկեր: Հ. 3, Ե., Սովետական գրող, 1988, 576 էջ:
13. **Հրաչյան Խ.**, Ուրցի Մարան, Ե., Հայպետհրատ, 1961, 336 էջ:
14. **Սիրաս Հ.,** Արարատ. Ե., Հայաստան, 1967, 788 էջ:
15. **Խանզադյան Ս.,** Հողը, Ե., 1957, Հայպետհրատ, 764 էջ:
16. **Մաթևոսյան Լ.,** Կարծրատիպ նախադասություններ. հոգելեզվաբանական հիմնավորում // Բանբեր Եր. համալս., 2007, N2, էջ 92-96:
17. **Սևունց Գ.,** Երկեր 5 հատորով: Հ. 2, Ե., 1963, 599 էջ:
18. **Այվազյան Ս.,** Լեռնցիներ,Ե., Հայպետհրատ, 1955, 455 էջ:

Л.У. АЙРАПЕТЯН

ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ И СТЕРЕОТИПНЫЕ КОНСТРУКЦИИ КАК КОМПОНЕНТЫ ИЗЪЯСНИТЕЛЬНОГО ПРИДАТОЧНОГО ПРЕДЛОЖЕНИЯ

В лингвистике отдельный интерес представляют фразеологизмы и речевые стереотипы как языковой строительный материал для синтаксических конструкций. Эти устойчивые языковые единицы имеют своеобразное проявление особенно в изъяснительных придаточных предложениях, где они могут иметь статус главного или зависимого компонента или выступать как значимая часть формирования этих компонентов.

Ключевые слова: фразеологизм, речевой стереотип, сложноподчиненное предложение, изъяснительное подчинение, предикация, бессоюзные конструкции, модальность.

L.U. HAYRAPETYAN

PHRASEOLOGICAL AND STEREOTYPE STRUCTURES AS PARTS OF OBJECT CLAUSES

In linguistics, phraseological units and speech stereotypes, which serve as units for forming syntactic constructions, are of particular interest. These set expressions or metasemiotic linguistic units have a unique actualization, especially in object clauses, where they can be the main or subordinate component or can act as the main part in the formation of these components.

Keywords: phraseological unit, speech stereotype, complex sentence, object clause, predication, asyndetic constructions, modality

ՀՏԴ 808.1:821.19

Հ.Պ. ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՉԱՐԴԱՐՅԱՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Ներկայացվում են Ռ. Չարդարյանի գրական գործունեությունը և նրա ունեցած դերը արևմտահայ գրական կյանքում:

Առանցքային բառեր. գրող, հասարակական գործունեություն, մշակութային կենտրոն, պարբերական հանդես:

Ռուբեն Չարդարյանը գրականություն է մուտք գործում 1893թ., երբ Կ. Պոլսի «Մասիս» հանդեսում տպագրվում են նրա առաջին ստեղծագործությունները՝ «Երգչուհին», «Վրաններ Մաստառի շրջանը» արձակ էջերը: Նույն 1893թ.